ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1951 *Общественные науки*

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Աբրահամյան

ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՈՒ ՆՐԱ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Պարսկա-տաճկական արյունոտ բռնակալությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի Դավիթ-Բեկի գլխավորած շարժումը Սյունիքում։ 1722—1728 թվերին հայրենասեր սյունեցիները Դավիթ-Բեկի գլխավորությամբ մղած կռիվներում ցուցաբերել են անօրինակ խիզախություն իրենց իրավունքը և պատիվը ոտնահարող պարսիկ և տաճիկ նվաճողների դեմ։ Նրանք կարճ ժամանակամիջոցում մաքրել են Սյունիքը օտար հարստահարողներից, քաջաբար կռվել են տաճկական կազմակերպված խոշոր բանակների դեմ և խայտառակ պարտության մատնել նրանց։

Սյունիքի ազատագրական պայքարը, ինչպես պարզվում է այժմ, մեկուսացված, անջատված հանգես չի եկել հայ ժողովրդի մյուս հատվածների և հարևան վրացի և ադրբեջանական ժողովուրդների ազատագրական շարժումներից, ինչպես փորձում են ներկայացնել հայ բուրժուական պատմաբաններից ոմանք, այլ սերտորեն կապված է եղել նրանց հետ։ Սյունիքի հայ հայրենասերների ոգեշնչման աղբյուրը ևս ռուսական հաղթական բանակներն են հանդիսացել, որոնք այդ ժամանակ իջնում էին Անդրկովկաս։ Ահա թե ինչու Դավիթ-Բեկի գլխավորած պայքարն այժմ մեզ համար կրկնակի արժեք և կարևորություն է ստանում և ամեն մի վավերագիր, նոր փաստ, որ գալիս է լուսաբանելու այդ շարժման այս կամ այն մութ խորշը, կարևոր է և արժեքավոր հայագիտության համար։

* * *

Դավիթ-Բեկի անձնավորության և նրա գլխավորած ազատագրական պատերազմների մասին մեզ հասած միակ պատմական հիշատակարանը՝ Ստեփանոս Շահումյանի թելադրությամբ Հուկաս վ. Սեբաստացու գրի առած պատմությունն է՝ «Ընտիր պատմուրիւն Դաւիր-Բէգին, և պատերազմաց Հայոցն Խափանու, որք եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի. այն է յամի աեառն 1722 և հայոց 1171» *խորագրով, որը հրատարակել է Ա. Դյուլամիրյանցը Վաղարշապատում 1871 թվին։ Այդ աշխատությունը ֆրանսերենի է թարգմանել ակադ. Բրոսսեն և հրատարակել Պետերբուրգում 1876 թվին* „Collection d'historiens Armeniens" *ժողովածուի երկրորդ հատորում (էջ 223—255)։*

Դավիթ-Բեկի պատմության տեքստը մեզ հայտնի է հինգ ձեռագիր ընդօրինակություններով՝ ա) Հ. Ս. Զամչյանի օգտագործած օրինակը (տես նրա «Հայոց պատմության» Դ հատորը, էջ 785—800), բ) Արսեն եպիսկ. Ղլտչյանի նկարագրած ձեռագիրը (տես «Նյութեր Դավիթ-Բեկի մասին»

խորագրով նրա հոդվածը, տպված «Արարատ» ամսագրում, 1905 թ. էջ 382—387), գ) Բանաթրյանի ձեռագիրը (վերջը թերի), որն ընդօրինակված է Հովհաննես Վ. Ամասիացու ձեռքով 1759 թվի հուլիսի 3-ին (այժմ գտնվում է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 4598-ի տակ), դ) Աստրախանում գտնված մի ձեռագիր, որն ունի XVIII դարի գրչություն և գտնվում է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 6835-ի տակ, և ե) Եսայի սարկավագի ձեռագիրը, 1847 թվի ընդօրինակությամբ, որի նախագաղափարն է հանդիսացել 1759 թվին Ամստերդամում ընդօրինակված մի ձեռագիր, որը գրանցված է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 3297-ի տակ։

Դավիթ-Բեկի և նրա գլխավորած շարժման մասին, լրացուցիչ տեղեկություն ստանալու նպատակով, հայ նշանավոր վիպասան Ռաֆֆին և ազգագրագետ Ե. Լալայանը պտտել են Զանգեզուրում և գրի առել ժողովրդի մեջ պահված հիշողությունները։ Առաջինն իր հավաքած նյութերն օգտագործել է «Դավիթ-Բեկ» պատմական վեպում, իսկ երկրորդը՝ «Զանգեզուրի գավառը» ազգագրական հոդվածում, որը տպագրել է «Ազգագրական հանդես»-ի 12-րդ գրքում (էջ 175—202)։

Պատմաբաններից շատերին արդարացի զարմանք է պատճառել այն, որ պատմական արժեքով շատ կարևոր և ժամանակի տեսակետից մեզ շատ մոտիկ այդ իրադարձությունը հարկավոր չափով չի արտացոլվել մատենագրության մեջ։

Այդ շարժման մասին նոր հիշատակություններ գտնելու նպատակով, հայագետներից ոմանք, վերջին տարիներս, հետազոտական լայն աշխատանք ծավալեցին և դրական արդյունքների հասան։ Հայտնաբերված են հետևյալ վավերագրերը և ձեռագրական հիշատակարանները.

ա) Զաքարիա Նկարչի ձեռագիր հիշատակարանը, որը հայտնաբերել և հրատարակել է Մեսրոպ արքեպիսկ. Մագիստրոսը «Բանբեր»-ում (տես գիրք Ա և Բ, 1921—1922 թթ., էջ 127—137)։

բ) Պարսկահայ փախստականների դիմումը Մինաս վարդապետին, որը հայտնաբերել և հրատարակել է բանասեր Ա. Հովհաննիսյանն իր «Հայ-ռուսական օրիենտացիայի ծագման խնդիրները» աշխատության հավելվածի մեջ,[1] 1921 թվին (տես էջ XVXVII)։

գ) Լիմ անապատի միաբան Մխիթար աբեղայի հիշատակարանը, որը հայտնաբերել և հրատարակել է պրոֆ. Մ. Ներսիսյանը «ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի տեղեկագրում» «Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան գավառներում» խորագրով (տես № 5—6, 1941 թ., էջ 73—75)։

Եվ վերջապես դ) Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետի հայատառ ռուսերեն զեկուցագիրը՝ գրած Տոլստովին, որը հայտնաբերել և հրա-

[1] Ա. Հովհաննիսյանի «Հայ-ռուսական օրիենտացիայի ծագումը» աշխատության հավելվածում հրատարակված վավերագրում հիշված Դավիթ-Բեկը, մեր կարծիքով, լեզգիների առաջնորդ Դուբ-Բեկն է և թյուրիմացաբար մեր հերոսի հետ է շփոթվել։ Այդ շատ պարզ երևում է հիշատակված տեքստից. «Էստամպոլէ տաճկի և Դաւիթ բէկի թէպտիր թէտէրուք և ճէպէխանայ և քանի փաշա և զորք թաին ի խղլպաշի երկրում....»։ Տաճիկների հետ դաշնակցել, ռազմամթերք էր պատրաստել, փաշաներ կարդել և կռվի էր պատրաստվում ոչ թե մեր հերոս Դավիթ-Բեկը, այլ լեզգիների առաջնորդ Դուբ-բեկը։

տարակել ենք մենք և մեր ընկերը՝ դոցենտ Դ. Դարբինեանը «Սովետական գրականության» մեջ (տես № 7, 1942 թ., էջ 129—131)։

Բացի թվարկված նյութերից, այլ նյութեր և հիշատակություններ, որքան մեզ հայտնի է, դեռ հրատարակված չէ։ Մենք, իհարկե, նկատի չունենք Դավիթ-Բեկի շարժման մասին աղբյուրներում եղած միջանկյալ հիշատակությունները։ (Դավիթ-Բեկի շարժման մասին ակնարկներ կան Եղյանի կազմած վավերագրերի ժողովածուում՝ „Сношения Петра Великого с армянским народом" (էջ 367), Պետրոս գի Սարգիս Դիլանենցի օրագրության մեջ (տես «Կռունկ հայոց աշխարհի» 1863, էջ 207) և մի քանի այլ երկրորդական աղբյուրներում)։

193։—1937 թվերին, մեր ասպիրանտական ուսման տարիներին, Մոսկվայի կենտրոնական արխիվներում, ընկերոջս՝ Դ. Դարբինեանի հետ կատարած պրպտումների ժամանակ, մեզ հաջողվեց հայտնաբերել Դավիթ-Բեկի շարժման և Անդրկովկասի ժողովուրդների փոխօգնության դաշինքին վերաբերվող մի քանի նոր վավերագրեր։ Այս տարի Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանում ևս հայտնի դարձան արժեքավոր նյութեր Դավիթ-Բեկի մասին։ Ահա այդ նոր նյութերի մասին մենք ցանկանում ենք անել մեր ներկա հաղորդումը։

* *

Դավիթ-Բեկի և նրա գլխավորած շարժման մասին մեր ձեռքի տակ եղած նյութերի մի խումբը կապված է Պետրոս Առաջինի Անդրկովկաս ուղարկած ներկայացուցիչ Էլչի Իվան Կարապետի հետ։ (Այս այն Կարապետն է, որը Հայաստան բերեց Պետրոս Առաջինի նշանավոր հրովարտակը՝ հայ ժողովրդին իր հովանավորության տակ վերցնելու մասին[1])։

Իվան Կարապետը քաղաքական աչքի ընկնող անձնավորություն է։ Նորահայտ վավերագրերից երևում է, որ նա 1723 թվի վերջերին Մոսկվայից գալով Անդրկովկաս, որպես Պետրոս Առաջինի ներկայացուցիչ, քաղաքական խոշոր գործունեություն է ծավալել Անդրկովկասում։ Նա ամեն կերպ աշխատել է համախմբել Անդրկովկասի ժողովուրդներին, կազմակերպել նրանց զինական ուժը և ղեկավարել Անդրկովկասի ժողովուրդների պայքարը տաճկական ագրեսիայի դեմ։

Մեր նպատակից դուրս է այժմ կանգ առնել Կարապետի գործունեության վրա ընդհանրապես։ Մենք Կարապետին ցանկանում ենք անդրադառնալ այնքանով, որքանով որ նրա գործունեությունը առնչվում է Դավիթ-Բեկի շարժման հետ և հիշատակություններ կան նրա մասին։

Էլչի Իվան Կարապետի գործունեությանը վերաբերվող որոշ վավերագրեր հրատարակվել են, սակայն նրա հիմնական թղթապանակները մնում են դեռ չհրատարակված։

Էլչին Անդրկովկասում եղած ժամանակ, ինչպես երևում է, նամակագրության մեջ է եղել քաղաքական կշիռ ունեցող մի շարք անձնավորությունների հետ։ Այդ նամակների պատճենները, ինչպես և ռուսաց արքունիքին ուղարկած զեկուցագրերի պատճենները հավաքել և պահել է առան-

[1] Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПБ., 1898, стр. 351—356.

ձին թղթապանակում։ 1739 թվին երբ նա մահացել է, ցարական արքունիքը կազմել է առանձին հանձնաժողով, որը ցուցակագրել և վերցրել է նրա ունեցած քաղաքական կարևոր վավերագրերը։ Էլչու այդ թղթապանակի վրա արված է հետևյալ նշումը. „Армянские письма, взятые по смерти из двора его, с описанием содержания их по разбирательству армянского купца Луки Ширванова".

Էլչու գործունեությանն է վերաբերվում 1724 թվին ռուսաց արքունիքի կազմած մի այլ թղթապանակը, որի պարունակած նյութերը նույնպես չեն հրատարակված։ Այդ թղթապանակի վրա արված է հետևյալ նշումը. „Листы (на арм. языке без перевода) разных духовных и светских лиц".

Եվ, վերջապես, Էլչու գործունեությանն է վերաբերվում 1730—1739 թվերի գրություններից կազմված մի այլ ստվար թղթապանակ, որի մեջ ամփոփվել են Էլչու քաղաքական գործունեությանը վերաբերվող մի շարք վավերագրերի պատճենները՝ կապված Էլչու ցարական արքունիքին ներկայացրած մի դիմումի հետ՝ վճարելու Անդրկովկասում իր եղած ժամանակ Մոսկվայի առևտրական գործում կրած վնասները։

Նշված երեք թղթապանակներն էլ արձանագրված են Լազարյան ճեմարանի հրատարակած „Собрание актов, относящихся к обозрению истории арм. народа" ժողովածուի Ա հատորի բիբլիոգրաֆիկ բաժնում (էջ 364, 368 և 372)։

Մեծանուն պրոֆ. Հ. Աճառյանի թարգմանությամբ հրատարակված «Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին» ժողովածուից երևում է, որ թվարկված թղթապանակներից առաջինի հետ, մեզանից առաջ, ծանոթ է եղել բանասեր Ա. Հովհաննիսյանը, որովհետև այդ ժողովածուում հրատարակված պարսկերեն վավերագրերը վերցված են նշված գործից, չնայած այդ մասին ոչինչ չի ասված հրատարակության մեջ։

* * *

Էլչի Կարապետի նյութերի մեջ Դավիթ-Բեկի մասին հիշատակություններ կան նորահայտ չորս վավերագրերում։

Էլչին առաջին անգամ Դավիթ-Բեկի մասին տեղեկություն է հաղորդել ռուսաց արքունիքին իր 1724 թվի փետրվարի 2-ի զեկուցագրում։ Այնտեղ լակոնական ոճով ասված է հետևյալը. «Վախտանգին տղէն [այսինքն՝ Շահնավազ խանը — Ա. Ա.] ուր 10 [30] մարթ ուղարկել [այ] Մեծ Խայէրին մէջն, էտպէս լսեցինք»[1]

Էլչու այս զեկուցագրի ռուսերեն թարգմանությունը, սխալ թվականի տակ, հրատարակված է Եղյանի ժողովածուում։ Այնտեղ ասված է. „Вахтангов сын своих людей 30 человек (послал) к Большим армянам"[2]

Չնայած հիշված տեղեկության մեջ Դավիթ-Բեկի մասին ոչ մի խոսք չկա և ոչ էլ՝ Սյունիքի, սակայն Լեոն, հիմք ունենալով Դավիթ-Բեկի

[1] Государственный архив феодально-крепостнической эпохи, կարճ՝ ГАФКЭ, ф. Армянские дела № 4 за 1724 г., Л. 14—15.

[2] Эзов, стр. 366.

պատմիչի տեղեկությունը Դավիթ-Բեկի Սյունիք գալու մասին, շատ սրամիտ կռահել է, որ այստեղ խոսքը Դավիթ-Բեկին և իր հետևորդներին է վերաբերվում, որոնք գնացել են Սյունիք ազատագրական շարժումը կազմակերպելու համար։[1]

Նշված տեղեկությունը հաստատվում է Էլչու Դավիթ-Բեկի մասին ռուսաց արքունիքին ուղարկած մի այլ զեկուցագրից, որը նա գրել է Դավիթ-Բեկի մասին իր լսած առաջին տեղեկությունը ճշտելուց հետո. «Դավիթը... եկել այ Ղափան է/30/մարդով»։[2]

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2888 ձեռագիրը, որը պարունակում է Հ. Մելիք-Սելիմյանցի «Համառոտ պատմութիւն Հայկազնեայց» աշխատությունը և ուր օգտագործված են Դավիթ-Բեկի մասին մեզ անծանոթ աղբյուրներ ևս, Դավիթ-Բեկին ուղեկցող մարդկանց թիվը հաշվում է 40 հոգի։ Այնտեղ ասված է. «(Դաւիթ-Բէկ) ընդ իւր առեալ արս իբրև քառասուն»։

Այսպիսով, հաստատվում է Դավիթ-Բեկի պատմիչի այն տեղեկությունը, որ Դավիթ-Բեկը Շահնավազի զինվորականներից է եղել և Սյունիք է գնացել իր 30—40 հետևորդների հետ միասին՝ այնտեղ զորք կազմակերպելու և ազատագրական շարժումը գլխավորելու համար։

Ավելորդ չէ այդ մասին բերել Դավիթ-Բեկի պատմիչի հաղորդած տեղեկությունը. «Եւ կոչեցեալ (Շահնավազ) զԴավիթ-Բեգն Սիւնեցի ի Հայկազեանս տոհմէ, ետ նմա իշխանութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան, զօրաժողով լինել անդ և պահել զերկիրն Հայոց»[4]։

Դավիթ-Բեկի մասին լսած իր այս տեղեկությունը Էլչին բավարար չի համարել և որոշել է անձամբ գնալ Սյունիք, ստուգել Դավիթ-Բեկի զինական ուժը, կազմակերպել այն, ծանոթանալ տեղի բնական հարստությունների հետ և այդ մասին զեկուցել արքունիքին։ Այդ երևում է նրա 1724 թվի ապրիլի 9-ին գրած զեկուցագրից. «Էս խայերն (այսինքն Սըղնախների հայերը—Ա. Ա.),—գրում է նա,—չորսէն մէկ բաժին չեն դառ, Մեծ Խայերըն չենք գնացել... Աստծոյ ողորմութեամբ և թագաւորին շաղաւաթովն ջակտ կառեմ, որ գնամ Մեծ Խայերին մէջն, էնդոնց որ յիմաց կառեմ... Եւ տեսնեմ թէ որչանք մարդ կոյ լինի՝ հազըրել կոյ տանք։ Եւ տեղախէնքըն էլ ինչպէս մադանի կայ, որ կոյ տեսնեմ, էլ արդ կառեմ»։[5]

Սյունիք գնալու համար Էլչին որոշ նախապատրաստական աշխատանք է տարել։ Նկատի ունենալով ճանապարհների վտանգավորությունը, նա հանձնարարել է յուզբաշիներից ոմանց պատրաստվել իրեն ուղեկցելու համար։ Այդ երևում է Ավան և Միրզա յուզբաշիների Էլչուն ուղարկած մի երկտողից, որը ցնցել է Էլչու թղթապանակում։ Երկտողն ամսաթիվ չունի, սակայն դատելով նրա մեջ արծարծված հարցերից, կարելի է որոշակի ասել, որ նա գրված պիտի լինի ապրիլի սկզբներում։

Նամակում յուզբաշիները Էլչուն հայտնում են, որ իրենք ստացել են

---

1 Լ. հ ո, Հայոց պատմություն, Գ հատոր, Երևան, 1946, էջ 668։

2 ГАФКЭ, Арм. д. № 2 за 1739 г., л. 64.

3 Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 6888, թ. 334բ։

4 Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին, էջ 5։

5 ГАФКЭ, Арм. д. № 1 за 1724 г., л. 33.

նրա ուղարկած նամակը և պատրաստ են կատարելու նրա հրամանը։ Երկտողի վերջում նրանք խնդրում են Էլչուն, որպեսզի նա վերցնի Թարխան յուզբաշուն և գա իր մոտ՝ Սյունիք մեկնելու համար։ Անհրաժեշտ ենք համարում բերել ստորև նշված երկտողը. «Ավան պէկ ուզպաշիս և Միրզա պէկ ուզրաշիս բարով հազար պարի պարոն Էլչի պէկիդ։ Նորայ՝ ինչ որ հրայմանքդ մասլուհաթ էր արել, մեր թաք ու պարծանքըն հրայմանքըդ է, մեր գլուխ տու ես, մենք քեզ ծառայ ենք. հրայմանքդ դրեալ էիր, մենք դապուլ արինք, ողջ լերուք... Դարձեալ, հրայմանքդ Թարխան ուզբաշին վեր առնուս, կեաս, կընաք Ղափանդ։[1]

Դեպի Սյունիք Էլչին ճանապարհվել է ապրիլի 15-ին։ Նա եղել է Սյունիքում, մնացել է այնտեղ մինչև հուլիսի կեսերը՝ շուրջ երեք ամիս, ծանոթացել է այնտեղ գոյություն ունեցող դրության հետ, կազմակերպական որոշ աշխատանք է տարել և վերադառնալով Սղնախները, հուլիսի 18-ին գրել է իր զեկուցագիրը, որը հայտնաբերվել է և պատմական մեծ արժեք է ներկայացնում.

Էլչու նորահայտ զեկուցագրից, ամենից առաջ, երևում է, որ Էլչու և Սղնախների զորքի գնալը տեղի է ունեցել արտակարգ իրադրության մեջ։ Էլչին Ղափանից գրություն է ստացել, որ Բարգուշատի սուլթանը և Նախիջևանի խանը, Պարսկաստանի այս դրածո ֆեոդալները, հարձակվել են Սյունիքի վրա, չորս հինգ հազար մարդ կոտորել և կանայք գերի տարել։ Էլչին այդ մասին հետևյալն է գրում արքունիքին. «Ի փոքր ծառայէտ արդ լինի վերոգրեալին զուլուզումն, որ մեք ապրիլի ԺԵ-ումն (15-ին) գնացինք Ղափան հայոց զօշունումն, չուն Ղափանայ գիր էր եկել թէ՝ Նախիջևանա խանըն և Բարգուշատայ սուլթանրն եկել ին Ղափան, հայոց ազգին շատ՝ Դ Ե հազար (4000—5000) զօշուն ին ջարթել, օղլուշաղ եսիր ին տարելս։[2]

Էլչուն այս նամակը, հավանական է ուղարկել է ինքը՝ Դավիթ-Բեկը, կամ նրա մոտիկ զինվորականներից մեկն ու մեկը։

Սղնախների զորքի Սյունիք գալու մասին միջանկյալ ձևով հիշված է Ստեփանոս Շահումյանի պատմության մեջ։ Այստեղ ասված է հետևյալը. «Եւ դէպ լինէր յաւուրսն յայնոսիկ (այսինքն «յամի երկրորդի գալստեանն Դաւթի Խափանն»—Ա. Ա.) Յովհաննէս Գուգարացւոյ գալ ի կողմանս յայնոսիկ յիսուն և վեց հազար հայազունդ զօրօք...»[3] Դավիթ-Բեկը Սյունիք է եկել 1722 թվին, իսկ նրա գալու երկրորդ տարին, այսինքն՝ 1724 թվին է, երբ Էլչին եկել է Սյունիք։

Այսպիսով, Դավիթ-Բեկի պատմիչի տեղեկությունը Սղնախների զորքի Սյունիք գալու մասին ճշտվում է նոր վավերագրով։

Շահումյանի պատմության մեջ Սղնախների զորքի հրամանատար է հիշվում Հովհաննես Գուգարացին։ Նույն անձնավորությունն է հիշված նաև Էլչու զեկուցագրում, միայն այստեղ Հովհաննեսը, տեղական տառադարձությամբ, հիշված է Ավան ձևով։

Դավիթ-Բեկի պատմիչը Սղնախների զորքի Սյունիք գալը հիշում է Նախիջևանի խանի և Բարգուշատի սուլթանի հարձակումից առաջ. որ ճիշտ

[1] ГАФКЭ, Арм. д. № 2 за 1939 г., л. 53.
[2] Там же, л. 61—65.
[3] Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին. էջ 10—11։

չէ։ Էլչու զեկուցագրից մենք տեսանք, որ Սղնախներից նրանք Սյունիք են շարժվել նշված դեպքերից հետո։ Այդ մասին Էլչին շատ պարզ հիշել է իր զեկուցման մեջ մի այլ կապակցությամբ ևս։ «Գնացինք Ղափան,— գրում է նա,— տեսինք, որ խայէրն ջարթվել ին և քորդի դօշունքն յեղ ին դարձել, գնացել։»[1]

Իր վերև հիշված զեկուցագրի մեջ Էլչին, այնուհետև, նշում է պարսիկ խանների խիստ թշնամական դիրքը Դավիթ-Բեկի նկատմամբ։ Այդ թշնամության պատճառը նա համարում է հետևյալը՝ Դավիթ-Բեկը ժամանելով Սյունիք, ինքնապաշտպանության նպատակով, տեղում չորս-հինգ հազար հոգուց բաղկացած մի բանակ է կազմել, որից պարսկական խանները ահաբեկվել են, կարծելով, որ Դավիթ-Բեկը նախապատրաստվում է հարձակվել իրենց վրա, իրենք են նախահարձակ եղել. «Մերչանք որ զզլբաշի դօշուն որ կոյ լինի,— գրում է նա,— գէ բուլորովէն, դէ գոն խային վերէն ուրէնց վախութենէնց։»[2] Մենք այստեղ ընդգծում ենք «զզլբաշի դօշունց» բառերը որպես նոր ապացույց այն պնդման, որ Դավիթ-Բեկի առաջին կռիվները իրոք, եղել են պարսկական զորքերի դեմ, ինչ որ ասված է Շահումյանի պատմության մեջ։

Էլչին, Սյունիքում եղած ժամանակ, ինչպես երևում է նրա զեկուցագրից, տեղի հայերին ամենուրեք ծանոթացրել է Պետրոս առաջինի հրովարտակի հետ՝ հայ ժողովրդին իր հովանավորության տակ վերցնելու մասին։ Այստեղ ևս, ինչպես Սղնախներումն է, հայերը սիրահոժար իրենց հպատակությունն են հայտնել ռուսաց. «Եւ թագաւորին ուքազն նշանց տվի,— գրում է նա իր վերև հիշված զեկուցագրում,— կարդացին, ոխչ միայրերան ասում ան թէ՝ մեք թագաւորին ծառայ անք (այսինքն՝ հպատակ ենք— Ա. Ա.)։»[3]

Էլչու զեկուցագրից վերև բերված տեղեկությունը բացառիկ արժեք ունի Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական շարժման համար։ Մինչև այժմ եղած ուսումնասիրությունների մեծ մասի մեջ Դավիթ-Բեկի շարժումը կտրված, մեկուսացված ձևով է ներկայացվել ոչ միայն Անդրկովկասի ազատագրական շարժումներից, այլև հարևան Սղնախներից։ Բացի այդ՝ հայագիտական գրականության մեջ կոնկրետ փաստերի հիման վրա գրեթե ոչինչ չի խոսված Դավիթ-Բեկի գլխավորած շարժման կապի մասին Ռուսաստանի հետ, եթե չհաշվենք մեր կինոաշխատողների ստեղծած ֆանտաստիկ մի անախրոնիզմը, երբ «Դավիթ-Բեկ» կինոնկարում Սյունիք՝ Դավիթ-Բեկի մոտ են բերում Իսրայել Օրուն, որը մահացել է Դավիթ-Բեկի շարժումը սկսելուց տասնմեկ տարի առաջ։ Նորահայտ նյութերը մեզ հնարավորություն են տալիս կոնկրետ և անվիճելի խոսել այդ մասին։

Ի դեպ՝ Սյունիքի ազատագրական շարժման՝ Ռուսաստանի հետ ունեցած կապը հաստատող տեղեկություններ կան նաև տպագիր գրականության մեջ, որի վրա, դժբախտաբար, ուշադրություն չեն դարձրել հայագետները։ Այսպես, հայտնի է, որ 1724 թվի նոյեմբերի 5-ին Սղնախների

[1] ГАФКЭ, Арм. д. № 2 за 1739 г., л. 64—65.
[2] Там же. л. 64—65.
[3] ГАФКЭ, Арм. д. № 2 за 1739 г., л. 64—55.

պատգամավոր Զելաբին Արտաքին գործերի կոլեգիայում Սյունիքի հայության անունից հայտարարել է, որ «Ղափանի հայությունը միախորհուրդ ցանկանում են մտնել Նորին Կայսերական Մեծության հովանավորության տակ»։[1]

Կամ մի ուրիշ փաստ։ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանն իր «Համառոտ պատմություն Ղարաբաղու Հայոց տիրապետող մելիքներու...» աշխատության մեջ հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում Դավիթ-Բեկի մասին. «Դաւիթ Բէկը ուղարկուած ըլլալով թագաւորիդը, ժողովեց մինչեի 60 հազար զօրք և նշանակելով զօրագլուխ հայոց ազգիցը Աւան խան Միրզին, Աւանին, ինքն գլխաւոր բանակի հետ գնաց Ղափանու երկիրը. Զվունդուր գիւղաքաղաքի մոտ։ Արզրումի փաշան լսելով Դավիթ-Բեկի այս զորաժողովը, հարցրել է նրանից՝ «թե ի՞նչ պատճառի են ժողովել Ղարաբաղի զօրքը»։ Դավիթ-Բեկը պատասխանել է, «թե նա կատարում է Մեծին Պետրոսի հրամանը»։[2]

Արղությանի ավանդախառն այս տեղեկության մեջ, անկասկած, կա պատմական որոշ ճշմարտություն և Արղությանն այստեղ ուզում է նշել Սյունիքի ազատագրական շրջանի կապը ռուսական արքունիքի հետ։

Էլչու նորահայտ դեկուցագրից պարզվում է, որ Էլչու հետ Սյունիք գնացած Սղնախների զորաբանակը շուտով հետ է վերադարձել, իսկ ինքը՝ Էլչին, մնացել է այնտեղ և պտտել է Սյունիքում։ Այդ մասին Էլչին գրում է. «Եւ մեր զօշունքն յեդ արեկ, մեք մնացինք տեղն, գնանք ամենայն տեղ»։[3]

Էլչին Սյունիքում եղած ժամանակ հետապնդվել է Բարգուշատի սուլթանի կողմից և մի օր էլ ընկել նրա ծուղակը, շրջապատվել սուլթանի և նրա հետ գործակցող քրդական զորքերի կողմից։ Նրան մեծ դժվարությամբ է հաջողվել դուրս գալ շրջապատումից և ապաստանել Խնձորեսկ գյուղում։ Նա այնտեղից երկու հարյուր զինված մարդիկ վերցրած ցանկացել է շարունակել իր ճանապարհը, սակայն թշնամիները նորից հարձակվել են նրա վրա։ Էլչին հարկադրված է եղել կռվի բռնվել նրանց հետ։ Էլչուն հաջողվել է այդ կռվում պարտության մատնել թշնամուն։ Այդ մասին նա գրում է. «Մենք մնացինք տեղն (այսինքն՝ Սյունիք—Ա. Ա.), որ գնէնք ամենայն տեղ. Քէրդն և Բարդուշատայ սուլթանը մեր ճանապարը կտրեցին, ոնչ գիդիլ ենք յառէջ գնալ, ոնչ գիդիլ ենք յեդ դառնալ։ Եկինք խնձորիս ավանս մին գեղ։ Զէր (մինչև որ—Ա. Ա.) մենք եկինք տեղն Բճ (200) մարդով՝ թէ յեդ գանք, քորդ արեկ մեր վեռէն։ Թագաւորին շաղավաթօվն մեր փոքր զօշունքն դուս գնաց, քրդէրին գլխավորէրն ջարգեցինք, բարի յեդ եկանք էլ Հարայբառ»։[4]

Էլչու Դավիթ-Բեկի մասին արքունիք ուղարկած վերջին տեղեկությունը վերաբերում է Դավիթ-Բեկի հաղթանակին տաճկական զորքի դեմ։ Այդ տեղեկությունը գրված է հայատառ ռուսերեն։ Այնտեղ ասված է. «Դաւուդ պէկ... Ներնչա ժեվեոտ Կապանցկի զիմլա, տամբշնիյ արմանիյ սոպ-

[1] Эзов, стр. 388.
[2] «Մեղու Հայաստանի», 1888, № 4, էջ 27։
[3] ГАФКЭ, Арм. д. № 2 за 1739 г., л. 64—65.
[4] ГАФКЭ. Арм. д. № 2 за 1739 г., 64—64.

բալ. Թուրք պրիչօլ, պատալի տավալ, ատ նիխ Մնոկու պօպիլ»,[1] որը թարգմանվում է. «Դավիթ-Բեկն... այժմ ապրում է Ղափանի երկրում, այնտեղի հայերին հավաքել է (իր շուրջ), Թյուրքը եկել է, ճակատամարտ է տվել և նրանցից շատ մարդիկ կոտորել»։ Այս վավերագիրը հիմնովին հերքում է Ե. քահ. Դեղամյանցի «Հայերի ազատագրական շարժումը ԺԸ դարում» աշխատության մեջ հայտնված անհեթեթ այն կարծիքը, որ իբր թե օսմանյան բանակը Սյունիք մտած ժամանակ Դավիթ-Բեկի զինվորները փախուստի են դիմել, և Դավիթ-Բեկի մոտ մնացած է եղել «ընդամենը 17 հոգի, որոնց թվում Եսայի կաթողիկոսը և 6 հոգի եպիսկոպոսներ և քահանաներ»։[2] Այս խնդրում չափազանցություն է նաև Դավիթ-Բեկի պատմիչի հաղորդած տեղեկությունը։

Այսպիսով, նորահայտ նյութերից երևում է, որ՝

ա) Պետրոս Մեծի էլչին եղել է Սյունիքում և ամեն կերպ աշխատել է նպաստել նրա զինական ուժի կազմակերպմանն ու հզորացմանը.

բ) էլչին Սյունիքում եղած ժամանակ իր հետ ունեցել է Պետրոս Մեծի հրովարտակը, որի հետ ծանոթացրել է տեղացիներին և նրանց ռուսական հպատակության տակ վերցրել.

գ) էլչու հետ Սյունիքում եղել են Սղնախների զորքերը, որոնք օգնության են գնացել Սյունեցիներին, նրանց պայքարի ծանր օրերին։

Իսկ այս բոլորից հետևում է, որ Սյունիքի պայքարը առանձնացած հանդես չի եկել Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումներից, այլ կապված է եղել նրանց հետ։

* * *

Մեր ձեռքի տակ եղած մյուս նյութերը վերաբերվում են Դավիթ-Բեկի անձնավորությանը, մի հարց, որով պետք է ասել, հայագետներից ոչ ոք չի զբաղվել։ Զեն զբաղվել ոչ այն պատճառով, որ այդ կարևոր հարց չի համարվել, այլ որ սկզբնաղբյուրները շատ կցկտուր տեղեկություններ են տալիս Դավիթ-Բեկի անձնավորության մասին։ Պատմական գիտությունների թեկնածու Ա. Միրզոյանը իր «Հայ ազատագրական շարժումները Սյունիքում» աշխատության մեջ իրավացիորեն գանգատվում է, որ «... Դավիթ-Բեկի կենսագրության վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները չափազանց աղքատիկ են։ Սյունիքի հայ ազատագրական շարժումների միակ պատմիչ Ստեփանոս Շահումյանը շատ սուղ կենսագրական տվյալներ է հաղորդում Դավիթ-Բեկի մասին՝ «Դավիթ-Բեկը Սյունեցի է, Հայկազյանց տոհմից», և ուրիշ ոչինչ։[3] Փաստորեն մինչև այժմ չի լուսաբանված Դավիթ-Բեկի ծննդավայրը, նրա ծագումը, նրա ժառանգների հարցը և այլն։

---

[1] Ա. Աբրահամյան և Դ. Գաբրիելյան, Նոր փաստաթուղթ Դավիթ-Բեկի մասին (տես «Սովետական գրականություն», № 4, էջ 129—131)։

[2] Ե. քահ. Դեղամյան, Հայերի ազատագրական շարժումները ԺԸ դարում, Բաքու, 1918, էջ 40։

[3] Ա. Միրզոյան, Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (1722—1730 թ. թ.), առանձնատիպ Հայաստանի Պետական Պատմական թանգարանի «Աշխատություններ»-ի Բ. հատորից, Երևան, 1950, էջ 148։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն են տալիս որոշ չափով լուսաբանել այդ հարցը։

Դավիթ-Բեկի անձնավորության հետ կապված առաջին կարևոր հարցը—Դավիթ-Բեկի ծննդավայրի հարցն է. որտեղացի է Դավիթ-Բեկը։ Դավիթ Բեկի պատմիչը իր հերոսին Սյունեցի է համարում՝ առանց կոնկրետ նշելու՝ թե Սյունիքի որ շրջանից է։ Ըստ ազգագրագետ Հալայանի Զանգեզուրում գրի առած մի ավանդության, Դավիթ-Բեկը Հափանցի է, և ընտանեկան մի վեճի պատճառով գժտվելով, թողել է յուրայիններին և մեկնել Վրաստան։ Ալիշանը և Լեոն Դավիթ-Բեկին համարում են Հալիձորցի։ Հայկ. ՍՍՌ Մատենադարանի № 4598 ձեռագրի Դավիթ-Բեկի ընդօրինակության մեջ Դավիթ-Բեկը Մծխեթցի է համարվում և այլն։

Մենք այժմ ձեռքի տակ ունենք Դավիթ-Բեկի հարազատ թոռներից մեկի՝ փոխ-գնդապետ Ստեփանոս Դավիդովի համար Դրիզորիպսյոսի մագիստրատի 1797 թվի նոյեմբերի 16-ին կազմած տեղեկանքը՝ ներկայացնելու ռուսաց Պավել թագավորին՝ Դավիդովին ազնվականության կոչում շնորհելու համար։[1] Այդ տեղեկագրից երևում է, որ Դավիթ-Բեկը ոչ թե Ղափանցի է, կամ Հալիձորցի, այլ բնիկ Գեղարքունիքից, պատմական Ծմակ կոչված գավառից։ Նշված տեղեկանքում այդ մասին ասված է. «Աթաբեկը (Դավիթ-Բեկի պապի հորեղբայրը—Ա. Ա.) ինքըն աւանդէ կտակաւ եղբօրորդւոյ իւրում Դաւիթ բեկին, որդւոյ Հախնազատ բեկի՝ հանդերձ իւր տեփական Ծմակ կոչեցեալ նահանգաւն, հայրենի գիւղօրէիւք՝ ծովակաւ ձկնալի գետորէիւք և այլովք ամենիւքն։

Հիշված անձնավորություններից ծանոթ դեմք է Հախնազար բեկը. նրա խաչարձանը գտնվում է Գեղարքունիքի Մեծ Մադրա գյուղի եկեղեցու առջև և վրայի արձանագրությունը հրատարակված է Ալիշանի «Սիսականում։[2]

Փոխ-գնդապետ Դավիդովի վավերագրի հիշված տեղեկությունը հաստատվում է Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի մի ձեռագրում ընդօրինակված Հովհաննես Զմյուռնիացու «Համառօտ պատմութիւն Հայկազանց...» աշխատության մեջ եղած մի հետաքրքիր հիշատակությամբ, ըստ որի Դավիթ-Բեկը սերվում է «ի զարմէ մեծի իշխանին Ալլահվերդի Սեպուհին»։[3] Ըստ որում, նույն պատմության մեջ ասվում է նույնպես, որ Ալլահվերդի Սեպուհը՝ որ նույն է՝ Աստվածատուրը, Գեղարքունիքի իշխանն է հանդիսացել։

Փոխ-գնդապետ Ստեփանոս Դավիդովի տեղեկանքից և Հովհաննես Զմյուռնիացու հաղորդած տեղեկություններից երևում է, որ Դավիթ-Բեկի ազգատոհմը կոչվել է Աստվածատրենք կամ Ալլահվերդյանք. Աստվածատուրը հիշվում է որպես Աթաբեկ, նրա որդին է եղել Հախնազար-բեկը, Առաքել Դավրիժեցու հիշած Շահնազար բեկի եղբայրը, որը արտոնվել է Շահաբասից։ Հախնազար բեկի տղան է հանդիսացել Դավիթ-Բեկը, մեր

---

[1] Վավերագիրը հայտնաբերված է և գտնվում է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի արխիվային բաժնում (կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 6, վավերագիր № 45)։

[2] Ղ. Ալիշան, Սիսական։

[3] Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռ. № 2888, էջ 656։

հեղինակի պապը։ Վերջինս, ըստ փոխ-գնդապետի վավերագրում եղած տեղեկության, 1616 թվին գրի է առել իրենց տոհմաբանությունը, որը և հիմք է ծառայել փոխ-գնդապետին տրված տեղեկանքի համար։

Պատմական այս նոր տվյալները մեզ հնարավորություն են տալիս ճշտելու մինչև այժմ մեզ հասած կցկտուր հետևյալ տեղեկությունները։

ա) Դավիթ-Բեկի պատմիչի տեղեկությունը, որ նա սյունեցի էր, սխալ չէ, որովհետև այն ժամանակ Գեղարքունիքը ևս մտնում էր Սյունիքի մեջ։

բ) Պատմական գիտությունների թեկնածու Միրզոյանի Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 2888 ձեռագրից բերած տեղեկությունը, որ Դավիթ-Բեկը Ալլահվերդի իշխանի դարմիցն ել, պիտի հասկանալ, որ նա Ալլահվերդու տոհմիցն էր, և ճիշտ է.

գ) Լալայանի Զանգեզուրում հավաքած ավանդության մեջ ևս կա որոշ պատմական ճշմարտություն, որ նա շառավիղ է համարում Աստվածատուր իշխանի։[1] սակայն Աստվածատուրը, որը նույնն է Ալլահվերդու հետ, ոչ թե նրա հայրն է եղել, այլ նրա նախահայրը.

դ) Դավիթ-Բեկի հայրն է Ալիխանը, որի մասին պարզորոշ տեղեկություն հասել է մեզ Զաքարիա ծաղկողի հիշատակարանում (տես «Բանբեր» 1921—1922 թ., էջ 136—137)։

Ուշադրության արժանի է փոխ-գնդապետ Ստեփանոսի վավերագրում հիշված այն տեղեկությունը, որը վերաբերում է անմիջապես Դավիթ-Բեկին։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ հատվածը. «Դարձյալ (Դավիդոփն) եցույց մեզ այլ թուղթ ի սոյն թվոյս սկսեալ մինչև 1722 թուին Փրկչի և Հայոց ՌՃՀԱ (1722), վասն զօրանալոյ ազգատոհմին իւրեանց նորոգ Դավիթ պէկ զօրապետին՝ թէ որպէս հնարիւք գնացեալ ի Սիւնիս ի նախկին հայրենին իւր ի ժամանակս աղուան Միրվէիզ շահին։ Եւ անդ զօրաժողով արարեալ զշրջակայ թշնամիսն և զօրսն օսմանցւոց հալածական առնել, որոյ քաջութիւնն յայտնի է (և) պատմութիւնն Հայոց»։[2]

Դավիթ-Բեկը ունեցե՞լ է արդյոք ժառանգներ։ Ազգագրագետ Լալայանն այս հարցին բացասական պատասխան է տալիս. «Դավիթ-Բեկը չէր ամուսնացել և ժառանգ չուներ»։[3] Նույնն է ասում և Ռաֆֆին։[4] Մեր ձեռքի տակ եղած վավերագրից պարզվում է, որ Լալայանը և Ռաֆֆին սխալվում են. Դավիթ-Բեկը ունեցել է Մխիթար անունով մի որդի։

Դավիթ-Բեկի այս որդին՝ Մխիթարը, ինչպես երևում է վավերագրից, ակտիվ մասնակցություն է ունեցել տաճիկների դեմ մղած ճակատամարտերում, որի համար և ստացել է «Ղզլխանջալքեատեա» մականունը, որ նշանակում է «Կարմիր գլուխ կրող առաջնորդ»։ Հետագայում նա հոգևոր կոչում է ընդունել և վերանվանվել Իսահակ։ Վավերագրում այս մասին ասված է. «Եւ զկնի մահուն նորին (այսինքն՝ Դավիթ-Բեկի —Ա. Ա.) նուաղելով գայ հասանէ ցնայրիւր Թասայու, այսինքն՝ Մխիթար

[1] Ն. Լալայան, Ազգագրական հանգես, 12-րդ գիրք։ Թիֆլիս, 1904, էջ 177։
[2] Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, արխիվային բաժին։
[3] Ն. Լալայան, վերև հիշված աշխատությունը։
[4] Տես Ռաֆֆի, Դավիթ-Բեկ։

որդի Դավիթ, որ երբեմն ի յօսմանցոց անուանի Ղզլիանչալքեահնեա։ Ապա հոգեվոր կարգ կալեալ անուանի տէր Իսահակ քահանայ։[1]

Դավիթ-Բեկի տղան՝ Մխիթարը, ունեցել է երկու որդի, որոնցից ավագը վերևում հիշված փոխ-գնդապետ Ստեփանոս Դավիդովն է, իսկ կրտսերը՝ Էջմիածնի միաբան Իսահակ եպիսկոպոսը, որը նվիրակ է եղել Պոլսում և Զմյուռնիայում։ Վավերագրում այդ մասին ասված է. «Էր Իսահակ քահանայէ... Ունան երկու որդի, որոց անդրանիկն է սոյն պոտ-պօլկովնիկ Ստեփանոսն, զոր ի վերն զրեցի և կրտսերն՝ տէր Իսահակ դիտ-նական արհիեպիսկոպոսն և ընիկ միաբան սրբոյ դահին Էջմիածնի, որ նախ նուիրակ լինի մեծին Պոլսոյ, ապա նուիրակ և առաջնորդ ի Զմիւռնոյ. և վախճանի ի վիճակի իւրում յիսունամեայ կենաց իւրոց 1793 սեպ. 17։»

Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի արխիվում մեր կատարած պրպտումների արդյունքները կկան հաստատելու փաստաթղթում հիշված տեղեկության վավերականությունը՝ Էջմիածնի միաբանության անդամ Իսահակի մասին։ Պարզվեց, որ Էջմիածինը այդ ժամանակ, իրոք, ունեցել է Իսահակ անունով գիտուն մի միաբան, որը նվիրակ է եղել Պոլսում և Զմյուռնիայում և վախճանվել է ճիշտ վավերագրում նշված թվականին։ Սակայն մի տարբերությամբ, որ նա եպիսկոպոսի աստիճան չի ունեցել, այլ վարդապետի։[3]

Ուշադրության արժանի է նույն վավերագրի շարունակության մեջ ընդօրինակող գրչի կողմից կատարված հիշատակագրությունը՝ Դավիթ-Բեկի ժառանգի մասին։ Այդ հիշատակագրությունից երևում է, որ Դավիթ-Բեկի ցեղատոհմն ապրելիս է եղել Թբիլիսիում և կոչվել է Ամիրխանյանք կամ դասապ Աստվածատուրենք։ «Դաւիթ-Բէգն,—գրում է նա, Թիֆլիզեցի է. Ամիրխանեանք, որք կոչին այժմիկ դասապ Աստուածատուրենք, որք այժմիկ կան ծնունդք նորա, զոր Շահնվազ խանն առաքեաց ի Սիսիան օգնական լինել հայոց յաւուրս Մեծին Պետրոսի։ ԺԴ (14) ամ զօրացաւ յոյժ ընդդէմ պարսից և Թուրքաց, ժողովեաց զզօրս հայոց մինչև զվաթսուն հազար անձինս և յետ յաղթութեանն ինքն մահուամբ գնքեցաւ և իւր երեկիքն անմիաբան լեալ ցրուեցան։»[4]

Այս հիշատակագրության մեջ, անկասկած, սխալ է հիշատակագրի տեղեկությունը Դավիթ-Բեկի 14 տարի Սիսիանում մնալու մասին — Դավիթ-Բեկը Սիսիանում եղել է 1722—1728 թվականներին։ Սակայն հիշատակությունը մեզ համար արժեքավոր է այն տեսակետից, թե Դավիթ-Բեկի ցեղատոհմը ինչպես է անվանվել նոր ժամանակներում։

Այսպիսով, նորահայտ նյութերից պարզվում է, որ Դավիթ-Բեկը Գեղարքունեցի է, սերվում է Աստվածատուրյան ցեղատոհմից, նրա հայրն է հանդիսացել Ալիխանը, նա ունեցել է Մխիթար անունով մի որդի, որի զավակներն են ոուս բանակի փոխ-գնդապետ Ստեփանոսը և Էջմիածնի միաբանության անդամ Իսահակ վարդապետը։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. № 6, վավ. № 45։

[2] Նույնը, վավ. 45։

[3] Նույնը, վավ. 45։

[4] Նույնը։

Դավիթ-Բեկի մասին մեր ձեռքի տակ եղած նորահայտ նյութերի մի մասն է, որ մենք անհրաժեշտ համարեցինք հրապարակել այժմ։ Մեր ունեցած բոլոր նյութերը անվերապահ վկայում են, որ Անդրկովկասի երեք դրացի և եղբայրակից ժողովուրդները 18-րդ դարում միասնական ձևով են դուրս եկել պարսկա-տաճկական բռնակալության դեմ, ձեռք-ձեռքի տված պայքարել՝ իրենց ազատության և երջանիկ ապագայի համար։

Սակայն 18-րդ դարում չիրագործվեց հայ ժողովրդի դարավոր իղձը՝ թոթափելու վերջնականապես օտարերկրյա լուծը իր ուսերից։ Հայաստանում արյունոտ պատերազմները չդադարեցին նաև հետագայում։ Եվ «... Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն։[1]

Ժողովուրդների մեծ առաջնորդ Ի. Վ. Ստալինի 1920 թվին Հայաստանում Սովետական կարգերի հաստատման կապակցությամբ ասված այս իմաստուն խոսքերը՝ Սովետական արևի տակ ծնված հայ ժողովրդի նոր և լուսաշող գալիքը ավետող հանճարեղ կանխատեսումն էր։

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 458։